

Umnung

1115

4hr pl

Aug-1



Aug-1  
1899

10 - 10

2011

82-3

Ա-95

ԳՐԱՎԱԾ. Ս. ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

# ԿԻՆ ԹԵՎԱԳՐ

Ս Տ Օ Կ Տ Օ Ն Ի

Թարգմանութիւն

Ա. ՆԱԶԱՐԵԹ ԵԱՆԻ



ԲԱԳՈՒ  
Տպարան „ԱՐՈՒ”

1899

82  
U-89 48

ԿԻՆ ԹԵՎ ՎԼԱԳԻ

ՍՏՕԿՏՈՒՒ

8  
005  
006  
007  
008  
009  
010

Թարգմանութիւն

Ա. Ն. Զ. Ա. Ր. է. Թ. Ե. Ա. Ն. Ի.

638



ԲԱԳՈՒ  
Տպարան „ԱՐՅՈՒ“  
1899

332

Дозволено цензурою Тифлисъ.  
12 Сентября 1898 г.

Մի ժամանակ, մեզանից շատ ու շատ  
արիներ առաջ, հին աշխարհում մի փոքր  
ու աննշան կիսավայրենի բազաւորու-  
թիւն կար: Սահմանակից նօր նուօսայե-  
ցիները մացրին այդ պետութեան մէջ բա-  
զաբակրտութեան մի բամբ հիմուններ,  
որոնք կիսավայրենի ժողովրդի համար  
մնացին անհասկանալի: Այդ պատճառով  
էլ ժողովրդի բնածին գաճանութիւնը ա-  
ւելի եւս կրկից եւ մի կատարեալ պատու-  
նաս դարձաւ Երկրի համար: Մանաւանդ  
վերջ չունեին բազաւորի օսարոնի հմահա-  
նութիւնները: Երա համար, բացի իր սե-  
փական երեւակայութիւնից, ուրիշ ոչ մի  
օրէնք, հասատութիւն չկար: Թագաւորի  
հանոյքները հէնց յայտնելուն պէս՝ պէտք  
է կատարվէին: Երբ բազաւորի հրաման-  
ները անարգել գործադրվում էին, այն

2003

Ժամանակ նրա ուրախ տրամադրութիւնը,  
նրա պարզեցներ հանգստացնում էին պա-  
լատականներին, որոնք միշտ պէտք է դո-  
գային բազաւորի առաջ: Վա՛յ նրան, ով  
նոյն իսկ տասնվեր հնազանդվել բազա-  
ւորին կամ իր չափը չը հանաչէր,—այդ  
դէմքում կատաղի բռնակալի աշխեր ար-  
տայայտում էին արիւնուուց գրեթինդրու-  
թեան անզուսաց ուրախութիւն:

Թագաւորը սիրում էր անհնազանդ-  
ներին, բողոքներին հէնց այս հրնուանեթի  
համար, որը զգում էր նա՝ այդ անհնա-  
զանդներին եւ բողոքներին ջախչախելիս:  
Այս բռնակալ մի բան էլ սովորեց հոօ-  
մայեցիներից՝—ունենալ մի կրկէս: Մրա  
մէջ էլ բարբառու ու ամեն բան իր  
քէմին յարմատեցնող բազաւորը մի փո-  
փոխութիւն մոցրեց: Կրկէսի նոր ժէնքը ոչ  
քէ բանաստղների մոցման կամ ի պա-  
տի աստուածների կատավոլ տօնախմբու-  
թիւնների համար էր, ոչ էլ մինչեւ իսկ բժ-  
բիւների ու սուսերամարտիկների համար:

Թագաւորի հրամանով կրկէսի ընդառնակ  
սրաները, նրա խորհրդաւոր մուլք կամար-  
ները, եւկար միջանցները պիտի ծառայ-  
էին արդարադասութեան վճիռները զոր-  
ծարելու համար:

Անկողմնապահ, անկաշառ «հակատա-  
րի» վճիռը յայտնվելուց յեսոյ, այդ կր-  
կէսը պատմէ յանցանքը կամ վար-  
ձասրէր ամենուրինը այնպիսի մի եղա-  
նակով, որի նմանը երբեք տեսնված չէր:  
Այդ խորհրդաւոր շէնքի անունը դրին  
**«Սրբայական կրկէս»:** Այս անու-  
նը աս սազում էր շինութեան. թէպէտ  
կրկէսի յատակագիծը եւ շինութեան կազմը  
լիւեցնում էին հարեւան ազգերի հարա-  
րափետութիւնը, սակայն նրան ի՞նչ բանի  
ծառայեցնելը եւ ի՞նչի համար զործադրելը  
բարբառու բազաւորի հնարագիտութեան  
եւ նիւանդոս եւեւակայութեան արդիւնքն  
էր: Զնայելով որ այդ բազաւորը իր  
ժամանակի բազաւորներից ամենայետինն  
էր, սակայն նա չէր ընդունում ոչ օրենք,

ոչ կարգ ու կանոն: Առ իր բնահանութիւնները, իր վարք ու քարքը ամեն օրէնքից վեր էր դասում: Կարծես թէ այդ քազաւորք աննկարազելի, անօրինակ քարպառսական հնարենով ուզում էր իր շարաբասիլի հնաբանների հնազանդութեան չափը ոռուել:

Եր որ մէկը մեղադրվում էր մի ծանր յանցանիք մէջ, այդ մասին հաղորդում էին քազաւորքն: Սա էլ հրաման էր տախս ժողովրդին հրաւիրել կրկէս: Նշանակած օրը ամբոխը լուս ու մունչ հաւաքվում էր կրկէսը. քազաւորք շրջապատուած պալասականներով, բազմում էր գահի վրա: Յետոյ, նշան տալուն պէս' բաց էին անում զանգակի դռւոր, որտեղից տռաչ էր զայլիս մեղադրեալը: Սա իր առաջ նկատում էր երկու՝ բոլորովին միմեանց նման եւ ամուր փակիլած դրներ: Այդ երկու, միմեանց նման դրներից մէկն ու մէկը մեղադրեալը պարտաւոր էր քանալ: Թէ ո՞րք բանար, այդ իր զիտենալու քանի էր,—

ընտրութեան մէջ նա անպայման ազաս էր: Ոչ մէկի ազդեցութիւնը չէր կարող մեղադրեալի համար նշանակութիւն ունենալ, ոչ ոք չպէս է խանգարէր կեանիք կամ մահուան անկողմնապահ վճռին: Այդ դրներից մեղադրեալը պէս է սպասէր կեանիք կամ ման:

Այսպէս ուրեմն, արդարադառութեան գործը կամ մեղադրեալի դատավճիռը կախված էր բախսի բերմունքից: Եթէ ն ակասաց իր ը մեղադրեալի համար սահմանել էր մահ, այն ժամանակ, նա իր ընտրած դրուր բանալիս, հանդիպում էր դէմ առ դէմ կանգնած բաղցած, կատաղի վագրին, որը յարձակվում էր մեղադրեալի վրա եւ տեղն ու տեղը լափում երան: Այս տեսակ վախճանքը ամենք համարում էին համ ակներեւ ապացոյց այն քանի, որ մեղադրեալը յանցաւոր էր, համ էլ արժանաւոր պատիժ երա զործած յանցանիք: Այդ ողբերգական տեսարանի ժամանակ հնչում էին պղնձէ զանգակներ,

իսկ լալյան կանայք սկսում էին իրանց վայնատներ, համաձայն հնուց սրբազնութեան սովորութեան: Ամբոխը զլիակոր ու վիճակած վերադառնում էր տուն: Ամենիք զարդուրում, սարսափահար էին լինում, երբ որ տեսնում էին թէ ինչպէս իրանց աշխի առաջ բաղցից կատաղած զազանը զգզգում էր անվիճեր երիստարդին կամ ալեզարդ ծերուենուն: Իսկ երէ մեղադրեալի բախտը բերում էր՝ նրա ընտրած ու բացած դրանցից դուրս էր զալիս մի կին, որը յակապէս ընտրվում էր ամբողջ քազաւորութեան ամենազեղեցիկ կանանց միջից, այն հասակի ու դասակարգի, որից էր մեղադրեալը: Այս դեպքում մեղադրեալը միանգամայն անմեղ է համարվում: Նրա առաջ դուրս եկող գեղեցկունին պէտք է նրա ամենազերեան պարզեւր դառնար: Անմիշապէս կատարում էին նրանց պատի հանդէսը, բեկուզ մահից նոր փրկված երիստարդը ամուսնացած լիներ, կամ թէ նրա ուշին ու միտքը մի ուրիշի վրա լի-

ներ ուղղված,—այդ մի եւ նոյն եւ Խոնչ արած. պէտք էր հնագանդվիլ: Այդ տեսակ եղանակով դատելու դէմ բազուորք ոչ մի բողոք, ոչ մի ընդդիմութիւն չէր կարող լսել եւ տեսնել: Ինչպէս այն դեպքում, երբ որ եւ է յանցաւոր էր դատվում, այնպէս էլ այս դեպքում, զործն անմիշապէս վկանվում էր ամենի աշխի առաջ:

Երբայական զանի տակ զՏնված դրանից դուրս էր զալիս երմապետը, որի առջեւից բայլում էին պարող կանայք եւ երածիւներ, ոսկէ փողեր հնչեցնելով: Քրմագետը կատարում էր պատի ծէսը: Ամեն կրդմբց լսվում էին երածւական փողերի ուրախ ձայներ, ամբոխն էլ մասնակցում էր իր կեցցէներով: Փեսան առաջնորդում էր հարսնացուին դէպի իր բնակավայրը, մանուկներն էլ նորապսակ զոյզի առջեւից ծաղիկներ էին սփռում:

Ահա այս էր դասավարութեան այն եղանակը, որ հնարել էր բարբարու բա-

գաւորը իր հպատակների համար: Դատավարութեան այս եղանակի օգտակարութիւնը ժողովրդի համար շատ հասկանալի էր: Հպատակների համար աւելի ձեռնու էր ենթարկվել նախատարի անդարձու անորու վճռին, բայ թէ դաման քաջաւորի բարբարութեան, որովհետեւ այս դեպքում վճռների զործադրութիւնը բացաւոր միևս կը բողնէր կատաղի վագրին:

Մեղադրեալը չէր կարող իմանալ թէ ո՞ր դուռն է տանում դեսի փրկութիւն եւ ո՞ր դեսի մասի: Նա բացում էր իր բնածած դուռը առանց որ եւ է կողմանակի օգնութեան եւ մի ակնթարքում մեղադրեալը կամ վագրի նիրաներն էր ըկնում, կամ ընդհանառակի' ազատիում եւ սահնում, իբրեւ պարզեւ, գեղեցկունի ամուսին: Այս աւրօրինակ դատասանի վճռները ոչ միայն ամեն կողմանապահութիւնից վեր էին, այլ եւ նրանց զործադրութիւնը կատավում էր այնպիսի արագու-

թեամբ, որ ոչ ոչ չէր կարող նրանից խուսափել:

Կրկեսի մէջ բազաւորի նրամանով նաւագած ժողովուրդը չգիտէր թէ ինչ պէտք է տեղի ունենայ արիւնակի տեսարա՞ն, թէ պատկի ուրախ հանդէս: Այս անորոշութիւնը այնպէս էր լարում ամենի հետաքրքրութիւնը, որ ուրիշ ոչ մի միջոցով, ոչ մի հնարավ չէր կարելի անել:

Տզէս ամբոխը դրւու էր զալիս կրկեսից կամ չափազանց ուրախ կամ սարսափանար եղած: Ժողովրդի փոքրարի հասկացող մասն էլ այնպէս էր համոզված, թէ անկողմանապահ նակատագրեն է զործադրում իւր վճռները, այն էլ հրապարակուն, ուրեմն եւ ոչ որի չէր կարելի մեղադրել անարդարութեան մէջ:

Թագաւորը ուներ մի աղջիկ՝ նրա բազաւորւթեան ամենաբանկագին զանձը, նրա միակ ուրախութիւնը: Թագաւորը շատ էր սիրում նրան, որովհետեւ աղջիկը նիւզ

հօր պատճենն էր, ժառանգել էր նրա կրակու բնաւորութիւնը եւ անզուսպ կամքը: Քարասիրս բռնակալի նոզին կարծես զերածնիվ էր այդ մատաղահաս աղջկայ մէջ: Թագաւոր պատրաստ էր աղջկայ համար զոնել ամբողջ մարդկութիւնը: Սակայն, բռնակալի անվեներ նպատակներից մէկը յանդզնեց գրաւել աղջկայ սիրտը: Երիտասարդի զեղեղկութիւնը, բացութիւնը, հասարակ ծագումը—այս բոլորը այնպիսի յատկութիւններ են, որոնց հիման վրա նա համարձակ կարող էր դասիվ այն վիպական հերոսների շարժը, որոնք արժանի են վայելելու մի արքայազն աղջկայ սէրբ: Թագաւորի աղջիկը ոչ թէ սիրում. այլ ուղարկի պատընում էր Երիտասարդին: Նա իր սիրոյ զզացմունքները արտայսյում էր ամենարուն կերպով, այս ոյժով, որպիսին նա ժառանգել էր իր բարբառու պապերից: Մի օր հայրը իմացաւ այդ սարսափելի զաղցնիքը. բռնակալը անմիջապէս կամեցաւ իր պարտքը կատարած լինել: Առանց

երկար-բարակ մշածելու, նա հրամայեց բան տանել յանդուզն Երիտասարդին եւ պահել այնտեղ մինչեւ այն օրը, երբ որ կրկեսում կը կատարվի նրա դատավճիռը: Այդ յանցանենք ամենենի համար մի չեսնված, չլսված բան էր: Թէ բազաւորը եւ թէ ժողովուրդը սրաւորով սպասում էին զործի վախճանին: Երբէք այդ տեսակ յանդուզն յանցանէ կատարված չէր: Երբէք խուար ասողը չէ յանդզնել այդ ասիմանի մօսենալ արեւին: Այս մի չլսված իննավալսահութեան օրինակ էր: Պարերից յետոյ այդ տեսակ դէպիեր շատ են պատճեն, իսկ այն ժամանակ դա նրէաւոր եւ անհաւալի էր համարվում:

Արբայական պարտիզում ժողովեցին վագրի ամենակատաղի տեսակները. այդ ընտրովի զազանեներից շոկեցին ամենակատաղին: Մի եւ նոյն ժամանակ բազաւորութեան ամեն ծայրերից ժողովեցին զեղեցկուհիների մի խումբ, որոնցից հասկացող անձինք ընտրեցին ամենազեղեցկին՝

մեղադրեալին արժանավայել կերպով վար-  
ձանքելու համար,—իբէ նա անմեղ դուրս  
գար:

Ամենին յայտնի էր երիտասարդի յան-  
ցաներ: Նա սիրում էր բազաւորի աղջկան.  
ուս էլ նրան էր սիրում: Ոչ ո՛չ դրանցից  
չէր ծածկում այդ: Թագաւորի մեքովն ան-  
գամ չէր անցնում, թէ նրա հնարած դա-  
տավարութեան եղանակը կարող էր այս  
դէպքի համար սխալ լինել: Թագաւորը մին-  
չեւ խսկ նախազգում էր, թէ այդ հանդէսը  
ի՞նչ մեծ զուարնութիւն է պատճառելու  
իրան: Այս տեսակ դէպքեր շատ իիչ կը պա-  
տճին: Մեղադրեալը ոչ մի ընդդիմութիւն,  
նաև ակուրատ ին ցոյց չտուեց: Ժողո-  
վուրդն էլ սաստիկ նետարերվում էր եւ ու-  
զում էր իմանալ՝ թէ նա կ ա տ ա գ ր ի վր-  
նիոր ի՞նչ է լինելու, — մի՞քէ յանցանք  
բան է հասարակ մահկանացոյի կողմից  
բազաւորի աղջկայ վրա սիրահարվելը:

Հասաւ նեանակած օրը: Ժողովուրդը  
ամեն կողմից բախվեց կրկէս: Շատ շուտ

ամբողջ կրկէսը լցվեց հանդիսականներով:  
Ասեղ զցելու տեղ չկար: Թագաւորը, պա-  
լատականներով շրջապատված, բազմեց այն  
երկու նակատագրական դռների դէմ, որոնց  
նմանութիւնը տան մարդու զարմութեց-  
նում էր: Ամեն բան պատրաստված էր: Նը-  
շան տալուն պէս՝ մեղադրեալը առաջ  
եկաւ: Ամենիր յուզլած, նայում էին նրան:  
Թէպէս ներկայ եղողներից շատերը նրան  
չէին նանաչում, սակայն երիտասարդի գե-  
ղեցկուրիւնը, նրա սառնասիր ու անսար-  
քեր տեսքը, նրա գեղեցիկ շարժուածքները  
հիսացրին ամենին: Էլ ոչ ո՛չ մեղա-  
դրում նրան արքայազն աղջկան սիրելու  
համար: Ո՞վ կարող էր սառնասրութեամբ  
դիմել շնորհալի երիտասարդի զարմութելի  
վիճակը: Մեղադրեալը բազաւորի առաջ  
ձունի չոփեց, թէպէս եւ նրա ութիւն ու միտ-  
քը շատ նեռու էին այն մարդուց, որին նա  
ողջունեց: Նրա աշեմեր բազաւորին շր-  
ջապատղների մէջ որոնում էին մէկի դէմ-  
քը՝ արքայազն աղջկայ դէմքը: Թագաւորի

աղջիկը իսկի մտովն էլ չանցկացրեց հեռանալ, փախչել այս տեսարանից, որի մէջ նա էլ մեծ դեր էր կատարել: Արքայազն աղջիկը համարձակ, արի բնաւորութեան եւ հնոյց նոզու տեր էր: Այն օրից, երբ նա հայր վնուեց դատել Երիտասարդին իր հնարած եղանակով, նրա նոզին, սիրը հալ ու մատ էր լինում, երբ մածում էր թէ ի՞նչպիսի ցաւալի վախճան կարող է ունենալ Երիտասարդի համար բազաւորի որոշումը:

Բայց իր ոսկիների, իժխանութեան եւ խորամանկութեան շնորհիս արքայազն աղջիկը կարողացաւ իմանոլ այն, ինչ որ ոչ ո՞ք չէր աջողինել իմանալ: Նա իմացաւ դռների գաղտնիքը...

Նա զիտէր, թէ որ դրան ետեւն է վագրի վանակը եւ որ դրան ետեւն է գեղեցկութին: Ոչ մի հնարով, ոչ մի բանով ոչ ոք չէր կարող իմանոլ այդ ամեն տեսակ արգելքներ ու միջացներ էին նախատեսարձակ գաղտնիքը ժածուկ պահելու հա-

մար: Սակայն, ոսկին եւ կնոջ կամքը միասին նրաց գործեցին...

Թագաւորի աղջիկը ոչ միայն զիտէր թէ ո՞ր դրան ետեւն է պահված գեղեցկութին, որ պատրաստ, դրան բացվելուն էր սպասում, որպէս զի առաջ զայ նրապարտ ու վսեմ, այլ եւ զիտէր' թէ ո՞վ է այդ գեղեցկութին: Այս անզամ ընտել էին բազաւորի աղջկայ պալատական կանոնից ամենողեղեցկութիւն: Արքայազն աղջիկը մի քանի անզամ նեատել էր, կամ զուցէ նրան բացել էր' թէ ինչպէս իր սիրած Երիտասարդը եւ այդ ընտված գեղեցկութին Երբեմն-Երբեմն փոխանակում էին փոխադարձ հաւանութեան եւ սիրոյ հնոյց հայեացներ: Մի անզամ էլ նեատել էր թէ ինչպէս նրանք միմեանց նես խօսեցին, թէեւ միայն մի քանի րօպէ: Գուցէ նրանք խօսում էին ամենալաւարկ բաների մասին, բայց նա ի՞նչպէս իմանար այդ, ի՞նչպէս նույնացներ ին սիրը: Ինչ էլ որ լինելու որ է նորմն կոչու-

1002  
1003  
1004



բազաւորի աղջիկը այնպէս էր կարծում,  
որ այդ ջահիլ պալատական կինը ուզում  
էր խլել նրանից Երիտասարդին: Արքայազն  
աղջիկը իր հոգու ամբողջ ոյժով ատեց  
դրան ետեւ ովահված գեղեցկունուն, որը  
դողարով սպասում էր, թէ արդեօք բաց-  
վելու՞ է դուռը:

Մեղադրեալը դարձեց իր հայեացքը  
բազաւորի աղջկայ վրա: Ամենի դէմ-  
երին սարսափ էր շիրել, իսկ բազաւորի  
աղջկան մահվան դեղնութիւնն էր պա-  
տել: Հենց որ Երիտասարդը իր հայեացքը  
զցեց բազաւորի աղջկայ վրա, իսկոյն  
հասկացաւ, որ նրան յայտնի է դռների  
գաղտնիքը, ընորհիւ այն նուրբ կապի եւ  
փոխադարձ հասկացողութեան, որը գոյու-  
թիւն ունի սիրով միացած Երկու հոգի-  
ների մէջ: Երիտասարդը այդպէս էլ կար-  
ծում էր. նա զիտէր բազաւորի աղջկայ  
զօրեղ, հասաւուն կամքը եւ հաւատա-  
ցած էր, որ ոչ մի քան նրան չէր կարող  
արգելել՝ դռների գաղտնիքն իմանալու:

Իմանալ այն, ինչ որ ամենի, նոյն իսկ  
բազաւորի համար գաղտնիք էր: Երիտա-  
սարդի յոյս նա էր: Եւ երբ մեղադրեալը  
իր հայեացքը զարձեց բազաւորի աղջկայ  
կողմը, հասկացաւ, որ նա էլ է սիրում...  
Նա արդէն համոզված էր, որ գաղտնիքը  
բանալին բազաւորի աղջկայ մէջն էր:  
Երիտասարդի յոյզված եւ սփորձված դէմքը  
մեխվել էր բազաւորի աղջկայ վրա: Նրա  
հայեացքը հարցնում էր,—ո՞ր դուռը...

Մեղադրեալը այնպէս էր իր հայեացքը  
ուղղել բազաւորի աղջկան, որ կարծես  
թէ հետք խօսում լիներ: Ամեն մի ռօպէն  
բանց արժէր մեղադրեալի համար: Ան-  
հրածես էր իսկոյն եւ եր նրան պատա-  
խան տայ: Արքայազն աղջկայ աչ ձեռքը  
բարձի վրա էր: Նա արազութեամբ մի  
նշան արեց: Ամենի համար այդ նշանը  
անհասկանալի մնաց: Մեղադրեալ Երի-  
տասարդը այդ նշանը նկատեց թէ չէ, իսկոյն  
սուազ գնաց եւ առանց մի ռօպէ անզամ

տաւանվելու, մօսեցաւ դռներից մէկին եւ  
քաց արաւ...

Այս պատմութեան ամենահետաքրքիր  
մասը կազմում է նէնց այն՝ թէ ոչ զուրս  
եկաւ բացված դռնից՝ **Կին թէ վագր:**  
Այս հարցի վեռելուն միտքը չի օգնի,  
իսկ կնոջ հոգու եւ սրտի հանաշելն էլ  
մարդուն տանում է դէպի մարդկային տն-  
րիւ, անհամար կրերի այն աշխարհը,  
որտեղ շատ հետ է մոլորվել: Մտածեցէք,  
ընթեցող, եւ պատախան տուէք, ոչ թէ  
իրեւ սատնամիր հանդիսաւես, այլ երէ  
կարող էք, մտէք կիսավայրենի աղջկայ  
հոգու ու սրտի մէջ, այն հոգու, որը տանջ-  
փում ու մաւում էր յուսահատութիւնց  
եւ խանդից: Թագաւորի աղջիկը անդոս-  
նալի կերպով կորցնում էր երիտասարդին:  
Բայց նա ո՞ւմ գիրկը կը գերազաւէ  
ցցէլ իր սիրածին մահման թէ նոր սիրոյ:

Նաև անզամ էր արքայազն աղջիկը  
օրերով տանջվել, հալ ու մաս էր եղել,

շատ անզամ էր զիշերները զարբել, եւեր  
ձեռներով ծածկել, որ չտեսնէ այն սար-  
սափելի պատկերը՝ թէ ինչպէս իր սիրած  
երիտասարդին զգզում է կատաղի վագրը:  
Բայց զո՞ւցէ նա երեւակայում էր եւ մի  
ուրիշ պատկեր: Թագաւորի աղջիկը կա-  
տաղութիւնից ատամները կրնացնում էր,  
նրա աչերը լցոլում էին արտասուլով, երբ  
պատկերացնում էր՝ թէ ինչպէս բաց-  
վում է միւս դռուր, որտեղից ժպտարով  
առաջ էր զալիս պահված զեղեցկուհին: Արքայազն աղջկայ սիրոր կտոր-կտոր կը  
լիներ, երէ իր սիրածի դէմքի վրա նկա-  
տէր ուրախութեան նշաններ՝ որ համ ինքն  
է փրկվել, համ էլ այնպիսի զանձի տրա-  
ցել. նրա սիրոր կը պատուիւր, երէ լսելու  
լիներ ամբոխ ցնութեան աղաղակները  
եւ փողերի ձայները: Նրան այնպէս էր  
բռում թէ երմապեր արդէն մօսենում է  
մեղագրեալի եւ զեղեցկուհու միուրիւնք  
սրբագրծելու: Նորապսակ զուգը պէտք է  
հեռախար բազաւորի աղջկայ աշերի

առաջ, որի յուսանատական նիշը կորչելու  
էր ամրոխի ցնծութեան գոշումների մէջ:

Աւելի լաւ չէր լինի, որ նէնց այժմ  
իր սիրածին զցէր մահվան գիրկը եւ<sup>1</sup>  
ապա իննին էլ հետեւէր նրան այն առար-  
գել միմեանց սիրել:


Բայց ո՞ւմ սիրը կը դիմանար արիւն-  
արքու վագրի, կեանի ու մահվան կուի,  
հոսող արեան առաջ... Արքայազն աղ-  
ջիկը միմիայն մի ռուկ մասձեց եւ պա-  
տասխան տուեց այն հարցին, որի համար  
մեղադրեալը նրան աղերսում էր:

Նա օրերով մասձելուց ու տանջվե-  
լուց յետոյ միայն լինեց այդ պատաս-  
խանը տալ: Առաջուց նա զիտէր, որ երի-  
տասարդը նրան այդ հարցը տալու էր:  
Թագաւորի աղջիկը առանց տասնման  
պատասխանեց, բարձրացնելով իր աշ-  
ճեռքը...

Այժմ ասացէք, ընթեցող, ի՞նչ էլ կար-  
ծում, ո՞վ դուրս եկաւ բացված դռնից,—  
**Կի՞ն թէ փացր:**



Ծանօթ. Հաս հետաքրքրելի է, նոգեբանական  
կողմից, իմասնալ յարգելի ընթեցող-  
ների կարծիքը կանանց սիրոյ եւ խանդի  
մասին, թէ ով ինչպես է բացադրում  
սէր:



ԳԻՒՆ Է 15 ԿՈՊ.

1115

2013

